ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA
«SERVICE FOR THE PROTECTION OF HISTORICAL ENVIRONMENT AND CULTURAL MUSEUM RESERVATIONS»
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
"СЛУЖБА ПО ОХРАНЕ ИСТОРИЧЕСКОЙ СРЕДЫ И ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ МУЗЕЕВ-ЗАПОВЕДНИКОВ"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

«03» հուլիս, 2026թ. N 1-707

«Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ -ի
տնօրեն Է. Թովմասյանին
ՀՀ Արարատի մարզ, գ. Դարբնիկ, 1 փ, 12 տ.
Հեռ. +374 99 55-55-87
էլ. փոստ՝ 0099555587@mail.ru
gl123ion@gmail.com

Հարգելի պարոն Թովմասյան,

Տեղեկացվում է, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/ և «Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2026 թվականի մայիսի 14-ին կնքված N ՊՄԱԹ-ԳՀԾՁԲ-26/11 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված անվտանգության ապահովման ծառայություններ /այսուհետ՝ ծառայություններ/:

Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ծառայություն մատուցող ***կազմակերպության աշխատակիցները*** պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում, ***զենք կրելու թույլտվություն*** և ապահոված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով որը ներակայցնել ըստ պատվիրատուի պահանջի: Կազմակերպությունը ևս պետք է ունենա զենք և փամփուշտներ պահելու և օգտագործելու թույլտվություն, որը ներակայցնել ըստ պատվիրատուի պահանջի:

Հայտնում եմ Ձեզ, որ ՊՈԱԿ-ի տնօրենի 2026 թվականի հունիսի 22-ի թիվ 1-637 գրությամբ դիմել ենք կազմակերպությանը 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պահանջվող թույլտվությունները: 2026 թվականի հունիսի 23-ին ՊՈԱԿ-ում մուտքագրված /մտից N 1-2235/ կազմակերպության պատասխան գրությամբ /կցվում է/ տրամադրվել է թվով 4 պահնորդների դիպլոմները և ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից կազմակերպությանը 2025 թվականի օգոստոսի 6-ին տրամադրված «զենք պահել և օգտագործելու իրավաբանական անձանց համար» թույլտվությունը, ինչպես նաև մինչև հունիսի 30-ը առձեռն ներկայացվել է /կցվում է/ թվով 3 պահնորդների պահնորդական դասընթացների մասնակցության վկայականներ:

Հարկ է նշել նաև, որ պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետի համաձայն, Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից

պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով, որ կազմակերպության կողմից 2026 թվականի հուլիսի 03-ի դրությամբ չի ներկայացվել պահնորդների զենք կրելու թույլտվությունները և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի ա) ենթակետը և 7.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2026 թվականի հուլիսի 06-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտման դեպքում պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելուց հետո կազմակերպության կողմից պայմանագրի և որակավորման գումարը չվճարելու պարագայում ՊՈԱԿ-ը կձեռնարկի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված միջոցներ կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Առդիր՝ 11 էջ:

Հարգանքով՝
Տնօրեն Արմեն Հովհաննիսյան

ՀՀ, ք. Երևան, 0082, Թաիրովի 15, հեռ/ֆաքս +374 10 587 427
15 Tairov str, Yerevan, 0082, RA, tel/fax: +374 10 587 427
РА, 0082 Ереван, ул. Таирова 15
info@hushardzan.am, www.monuments.am